Ֆինանսական շուկայի մասնակիցների մակրոտնտեսական սպասումների վերաբերյալ նոր հարցումները հասանելի են Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում

08.07.2025

ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային և ֆինանսական կայունության քաղաքականությունների շրջանակում, իրականացում է եռամսյակային հարցումներ՝ նպատակ ունենալով գնահատել ֆինանսական համակարգի սպասումները մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ և կիրառել այդ տեղեկությունը քաղաքականությունների ձևավորման և իրականացման գործընթացում:

Հաշվի առնելով, որ հարցումների արդյունքներն իրենց արդիականությամբ հետաքրքիր են նաև այլ շահագրգիռ կողմերի՝ որոշում է կայացվել այդ տվյալների համառոտ արդյունքները հրապարակել եռամսյակային պարբերականությամբ ԿԲ պաշտոնական կայքում՝ «Վիճակագրություն» բաժնի «Վիճակագրական հարցումներ» ենթաբաժնում, «Մակրոտնտեսական ցուցանիշների սպասումների վերաբերյալ ֆինանսական շուկայի մասնակիցների հարցում» վերնագրով:

Հարցումները մեկնարկել են 2017 թվականի երկրորդ եռամսյակից՝ իրականացվելով տվյալ եռամսյակի վերջին ամսում մինչև 2023 թվականի չորրորդ եռամսյակը: 2024 թվականից հարցումների ժամանակացույցը համապատասխանեցվել է դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման ժամանակացույցի հետ՝ ապահովելով, որ հարցումների արդյունքները հասանելի լինեն մինչև համապատասխան նիստերի մեկնարկը:

Հարցումների շրջանակում ուսումնասիրվում են ֆինանսական կազմակերպությունների սպասումները հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ՝

- Գնաճ (%)
- Վերաֆինանսավորման տոկոսադրույք (%)

Տնտեսական աճ (%)

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեք (AMD/USD)

Բացի այդ, յուրաքանչյուր տարվա չորրորդ եռամսյակում ուսումնասիրվում են ֆինանսական կազմակերպությունների սպասումները տնտեսության հաջորդ 12 եռամսյակների ընթացքում՝ մասնավորապես՝ «Գյուղատնտեսություն», «Արդյունաբերություն», «Շինարարություն» և «Ծառայություններ» ճյուղերի տնտեսական աճի, անշարժ գույքի գների փոփոխության, ինչպես նաև գործազրկության մակարդակի վերաբերյալ:

Հարցմանը մասնակցում են ՀՀ ֆինանսական համակարգի հիմնական դերակատարները՝ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ընկերություններ և ներդրումային ֆոնդերի կառավարիչներ:

Հարցումների ամփոփ արդյունքներին կարող եք ծանոթանալ ԿԲ պաշտոնական կայքում՝ հետևյալ հղմամբ՝